

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утρ илжүүлөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

፭.፻፷፻ 8421

G 661


Կազմող՝ Գ. Ն. Երգնելյան

Ալեքսանդր Շիրվանզադե

Պատմվածքներ (կազմ.՝ Գ. Ն. Երզնկյան), Երևան, 1986. — 175էջ:

¶ 661 Գրանցում պարզ երևում է հեղինակի լավագույն պատմվածքների մի շարք ստանությունը՝ ստորաբարչության, շողոքությունը, մարդու ստոր արարենքի նկատմամբ:

C 4702080100 (51) 206 1986
702 (01) 1986



Александр Ширванзаде
РАССКАЗЫ
(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван—1986

© «Էպիզո» հրատարակչություն, կաղմելու համար, 1986



ՆՈՐԵՐԻՑ ՄԵԿԸ

Պատկեր

Օրը մթնեց: Սանք, վշտալի օր. նա անցավ... Գիշեր է, կլուսանա, արեգակը դուրս կփա, և գարցյալ կսկսվի նույն տաղակությունը, նույն ձանձրալի կլանիքը, որն ահա ուղիղ հինգ տարի է նրան մաշում է: Անհնարին է այդպես շարունակել, այդ արդեն շափազանցություն է, ստորություն է և, վերջապես, անբարոյականություն է: Դառն է այդ ճշմարտությունը, բայց ճշմարտություն է, և, վերջապես, ժամանակն է ուղիղ նայել այդ ճշմարտության երեսին: Հարց. ի՞նչ է անում նա, ո՞ւ է զնում, ինչո՞ւ համար է ապրում: Գտել է. խնդիրը հենց այդ շորս բառերի մեջ է կայանում: «Ինչո՞ւ համար է ապրում», այսինքն, ի՞նչ է նրա գոյության նպատակը: Մի՞թե միայն ապրելը: Բայց լոկ ապրելն, արդյոք, կարո՞ղ է բարոյական մարդու կյանքի նպատակ լինել— Ոչ: Ապրել միայն ապրելու համար— այդ ստոր և զդովի կյանքն է, որ արժանի է միայն անբան կենդանուն: Բայց ի՞նչ ասել է կյանքի նպատակի:— Նա մարդկային գոյության հենարանն է: Սուս է, որ ասում են, թե կան մարդիկ առանց նպատակի: Նա մի հավատում: Աննպատակ կյանքը մա՞՞ է: Հարուստի և աղքատի, ագեստի և իմաստունի, բարոյական մարդու և անբարոյականի կյանքն ունի որևէ

ճենարան: Ամեն մարդ ձգտում է հասնել յուր ցանկացածին, և ահա այդ ցանկացածին հասնելու հույսն է, որ պահում է յուրաքանչյուրի գոյությունը: Հակառակ դեպքում, նա չի կարող ապրել, կանչետանա, կշոգիանա յուր անբովանդակ կյանքի անբովանդակ տարածության մեջ Բայց ի՞նչ է նա:— Ոչինչ. դատարկ տարածություն, եթերական էսթյում:

Քամալյանը բարձրացավ աթոռից, որ դրած էր փոքրիկ, հնամաշ գրասեղանի քով: Այդ սեղանի վրա դարսված էին անկանոն կերպով զանազան բովանդակության, մեծ ու պստիկ, կագմած ու անկազմ գրքեր, լուսպերի թերթեր, մի քանի գրչակոթեր, մի հայելի և ուրիշ հարկավոր ու անպետք իրեղեններ: Իսկ սեղանի առաջի կողմում, աթոռի դիմում, աթոռի դիմ ընկած էր մի բաց ձեռատետր:

Այս Քամալյանի հիշատակարանն էր:

Փոքրիկ ապակյա հասարակ կանթեղն աղոստ կերպով լուսավորում էր նեղ և ցածր առաստաղով սենյակը: Զենոները զնելով վարտիքի գրպանները, գլուխը թերթելով դեպի կուրծքը, Քամալյանը սկսեց քամել սենյակի մի անկյունից դեպի մյուսը, հետ ու առաջ, նրա զեմքը գունաւոր կորցրել էր յուր պարզությունը և ծածկվել այնպիսի կյանքուներով, որնք երեսում են միայն տարիքն առաջ մարդկանց ճակատի վրա: Բարակ սեազուք, ճոնքերի տակից նայող մուգ աշքերը, զրկվելով իրանց նախկին կրակոտ փայլից, ընկել իին խորշերի մեջ: Երկու խորշը զծեր այդ աշքերը բաժանում էին սարթնած երեսի մյուս մասից:

Մի քանի բոցի լուս ու մուշ շրջելուց հետո, Քամալյանը կրկին մուսացալ սեղանին: Նա սկսեց թերթել սեղանի վրա դրած ձեռատետրը, երբեմն ձեռը տանիկով ճակատին և հետ զարսելով երկայն, փայլուն ու կապուզ մազերը, որնք շուտ-շուտ ցրվում էին առաջ:

— Հետացի՞ր աշքից, — զուեց նա հանկարծ, հիշատակարանը ձգելով սեղանի մյուս անկյունը:

Այն ափելի կրկնապատկում էր նրա վշտերը, երբ աշքի առջև էր Այն հիշեցնում էր նրան յուր պախարակի անցյալը, պատկերացնում էր նրա առջև մի դատարկ, մի հիմար կյանք, և ինքն իսկ քննադատում այդ կյանքը: Պիտի շորանար այն ձեռը, որ զորել էր այդ թերթերը, այն ձեռը, որ անշունչ առարկայիդ բերանը լեզու է զրել, որպեսզի այսօր այդ լիդով անեծք կարգացվի նույն այդ ձեռը բանացնողի գեմ: Եվ ի՞նչ ես դու, զվարելի թղթի կտոր: Ի՞նչ ես դու և ի՞նչ են ահա սրանք (Քամալյանը ձեռքը մեկնեց զեպի մեծակագմ գրքերը), որոնք իսարում են մարդկությանը, բախտավորություն են խոստանում, իսկ հետո զանություն և կոկիծ են տալիս այդ բախտավորության փոխարեն: Բայց ո՞չ, դուք թրզ-

թեր, մեղավոր չեք. մեղավոր են դարձյալ նրա նման զգիկի կենդանիները, մեղավոր է մարդ կոչված ստոր արարածը: Այո՛, մեղավոր են նրանք, որոնք սեացնելով իրենց կեղտու մատներով ձեր լուսնի նման մարուր երեսը, — հավաքում են ձեզ միասին, սփռում են աշխարհի չորս կողմերը — նրա նման անօգուտ արարածների թիվը ավելացնելու և մարդկության թշվառությունը բազմապատկելու համար:

Մատքերում է նա, երբ յուր պատանեկորթյան օրերում, վարակված ընկերակիցների սովորությունից, ահա այդ սեացրած թերթերից մի կապ դրած առջեր, ժամերով կարդում էր, մայրը միշտ կրկնում էր, «Որդի, խնայիր քեզ, սիրտդ մի՛ մաշիր այս գիր ու գրյանքով»: Այն ժամանակ մոր այդ խոսքերը նրան ծիծաղեցնում էին: Նա զիարճանում էր այդ կնոջ միամտությամբ, որ զգիտեր «գիր ու գրյանքի» արժանավորությունը, նրանց օգտակարությունը: Տասը տարի է անցել այդ ժամանակից, նրա մայրն արդեն մեռած է, և այժմ Քամալանն ուրիշ կերպ է հասկանում նրա խոսքերը: Նրա մայրը միամիտ չէր, ոչ, այլ ինքն էր հիմարը, որը նրա տգետ խոսքերի մեջ թաքնված խոր իմաստությունը շփիտեր: Այո՛, շփիտեր, խորասուղված ընթերցանության մեջ, ոչինչ ուրիշ բան չէր ուզում հասկանալ, ոչնչի և ոչ ոքի չէր հավատում, բացի նրանից, ինչ որ ասում էին այս «գիր ու գրյանքը»: Այսօր ամեն ինչ անցած է, այևս մայրը նրա կողքին նստած չէ, և նա չի կարող, նրա խրառը կատարելով, մխիթարել նրան: Այժմ ուշ է, ամեն բան վերջացած է, և նա...

Մի ուժին ապտակ տալով ճակատին՝ Քամալանը վեր թռավ աթոռից և սեղանից վերցնելով մի ծխախոտ, վառեց ու սկսեց ծխելով հնու ու առաջ շրջել: Նա ավելի ու ավելի գունատվում էր, մտաբերելով յուր անցյալը, յուր մանկությունը, այն օրերը, որոնց նա վերադարձնել կցանկանար, բայց չէր կարող: Այդ օրերը նրա համար մի-մի ասեղներ էին, որոնք ցցվելով նրա ուղեղի մեջ, բռբռքում էին նրան:

Նա ծխում էր անսովոր կերպով: Վառելով ծխախոտը, նա մի քանի անգամ այնպիսի ապահովթյամբ քաշեց, որ պապիրոսի կեսը ծովս դառնալով, անհետացավ: Ինչպես մի մարդ, որ երկար շնչարգելությունից հետո, լիքը բերանով կլանում է թոքերը միանգամբ օդի ահապին քանակություն, Քամալանը ծխախոտի ծովսը յուր շնչի բոլոր զորությունով ծծում էր ներս: Կարծես, կամենում էր այդ դառն ծխով թռնավորել և սպանել այն վշտերը, որոնք դարավել էին նրա ճնշված սրտի վրա, և արմատախիլ անել այն մտածմունքները, որոնցով ծանրաբեռնվել էր նրա ուղեղը: Բայց չետ լինում, ծխախոտը չէր օգնում, նրա վշտերը և մտածմունքները մնում էին միևնույնը: Նրանք չեին թուլանում, չեին պակասում,

միայն ավելի գրգռում էին: Եվ Քամալանը հաղթված, ճնշված նրանց ներքո, չգիտեր ինչ աներ, ինչպես կրեր նրանց ծանրությունը: Նա կրկին մոտեցավ սեղանին և կրկին սկսեց յուր անգութ գատառատանը յուր անցյալի և ներկայի վրա:

— Համեմատե՞լ եմ, արդյոք, ինձ ուրիշ ինձ նման արարածների հետ, գտե՞լ եմ, արդյոք, իմ մեջ այն հատկությունները, որոնցով ես նմանվեի այժմյան մարդկանց, որոնք իմ կյանքը կապեին այդ մարդկանց հետ: Կա՞ն, վերջապես, ինձ նման ուրիշ մարդիկ: Այո՛ և ոչ: Այո՛, որովհետեւ բոլոր իմ ճանաչած մարդիկ առանձնապես վերցրած ունին իմ հատկություններից որևէ մեկը: Ա՛չ, որովհետեւ չկա մի մարդ, որ պարունակեր յուր մեջ այն բոլորը, ինչ որ ես եմ պարունակում իմ մեջ: Ինձ նման չկա մի սրբիշը, և ի՞նչ եմ հայ Ամենայն ինչ և ոչինչ Այդ հաստատում է այս անողորմ, անգութ վկան, իմ նախատելի անցյալի այս արհամարհելի նկարագիրը:

Քամալան, այս ասելով, ձեռը դարձյալ մեկնեց հիշատակարանին, վերցրեց նրան և, զնիելով յուր առջն, կրկին սկսեց թերթել: Կանթեղի աղոտ լույսը ընկավ հիշատակարանի մանր տառերով գրված տողերի վրա: Նա շարունակում էր թերթել, երրեմն կանգ առնելով այս ու այն երեսի վրա և կարողալով: Այդ ժամանակ նրա դեմքն ավելի այլայլվում էր, նրա ճակատի կնճիռները մոռենում էին իրարու և սեղմակում, երեսի գծերն ավելի ու ավելի խոչըրանում: Այդ նրա հոգեկան խորին հուզումը, նրա ներքին աւելիությունն էր Հիրավի, հիշատակարանի ամեն մի երեսը, մտաբերելով նրան յուր կյանքի այս կամ այն ժամանակամիջոցը, գրգռում, եռապատկում էր նրա վրտովմունքը, լեցնում էր նրա դառնության բաժակը: Կարծես այս լուս ու մոմիզ սև տողերը մի-մի թունավոր սողուններ լինեն, որոնք սողալով նրա մարմնի վրա, ծակծկում էին նրան իրանց թունավոր ասեղներով:

Հենգ տարի է, որ նա մտել է կյանքի մեջ: Ի՞նչ է արել այդ հինգ տարվա ընթացքում հասարակության համար, ի՞նչ օգուտ է ավել նրան: Ո՞վհնչ, բացի վնասից: Բայց չէ՞ որ նա կամենում էր օգտակար լինել և զեռ ուսումնարանի նստարանի վրա, յուր երկակայության մեջ ստեղծում էր յուր ապագա հասարակական գործունեության» համար հարցուրավար ծրագիրներ: Ո՞վ են այդ ծրագիրները: Զեան նրանք, շոգիացել են: Ինչո՞ւ Որովհետեւ... այո՛, որովհետեւ նա այդպիս չէր հասկանում կյանքը, որովհետեւ նա թափանցելի օդի մեջ կամենում էր ամրոց կառուցանել: Նա կարծում էր, թե կարող է կյանքը ծառայեցնել յուր նախատիներին: Պատանեկական երևակայություն, ինչեր չեա առեղծում դու, ի՞նչ հսկայա-

կան խոշնութեալ շեն փշրտվում, խորուակիում քո առջև ԱՇԽ. աեթ աստված, գլուխը պտտվում է, աշքերը մթնում են, երբ նա մտածում է այդ մասին: Ի՞նչ անի, գիշերն անցնում է, լուսը մոռենում է, ամենքը քնած են անզորը հոգով, ամենիքը ցերեկվա իրենց աշխատությունից հոգնած, հանգստանում են: Խսկ նա ինչ է արել, որ այդքան հոգնել, թուլացել է, և ի՞նչ պիտի անի վազրի Գարձյալ պիտի նստի այստեղ, այս տաղտկալի, ձանձրացուցիչ սենյակում, կարգա, կարգա ու կարգա տակն ու վեր, մի հինգ տող այս զրբից, հինգը՝ մյուսից: Տեր աստված, համբերություն էլ չունի մի գիրք մինչև վերջը կարդայու...

Քամալանը կրկին բարձրացավ տեղից և սկսեց շվարված ջրէկ հետ ու առաջ, ինքն իրեն անդադար կրկնելով. «մի՞թե. մի՞թե չկա մի ելք» Հետո նա հուզված մոտեցավ վառարանին և մեջքը տալով պատին, դարձացավ խորաստվեց յուր դառն մատածողության մեջ:

— Հարկավոր է, հարկավոր է անպատճառ դուրս գալ այդ ժանր մըստքերի լաբիրինթոսից, — դարձյալ սկսեց խոսել նա ինքն իրան: Այս՝ Հեղա է ասել, հարկավոր է ազատվել այդ ժանր մտքերից, բայց կատարել... չըմ... Թշվառ արարած, զգացիր քո ոչնչությունը, անիմի՞ր ինքոք քեզ, ուրիշ միտթարություն չունիս: Զէ՞ որ դու ամեն ինչ փորձեցիր, և ի՞նչ Հաջողություն դատար: Գրահանություն, ուսուցչություն և ուրիշ սույնանման շավիղներ դու ուաք ես կոխել, ինչո՞ւ ուրեմն չկարողացար այդ շավիղներից մեկի վրա երկար շարունակել քո բնթացքը: Զէ՞ որ դու մինչև անգամ ուզում էիր արհեստավոր, նույնիսկ հասարակ բանվոր դառնալ, ինչո՞ւ այստեղ ես չկարողացար երկար մնալ: Ո՞վ էր քեզ արգելում, ի՞նչն էր խոշնդրությունը քո առցել:

— Ավագ էր արքեպիսկոպոս, ի՞նչն էր խոչընդուռ զնում իմ առջև, — կրկնեց Քամալյանն ինքնն իրեն:

— Ինք և ուրիշ ոչ ոք, քո խոշընդուռը պարունակվում է հենց քո
մեջ, — շնչաց նրան նույն ներթին ձայնը: — Որոնիր և կգտնես, հարցրո՞ւ
քո հիվանդ նյարդիքից, քո զյուրազրկու զգացմունքներից, հարցրու քո
թույլ կամքից, անհիմն ու անհաստատ բանականությունից, և նրանք կա-
սին քեզ: Դու ամեն տեղ որոնում էիր այն, ինչ որ քեզ համար հնարավոր
չէր գտնելու, և որոնած զգտնելով, հոսանքատվում էիր ու թողնում քո
քննտրած ճանապարհը: Դու գետ գործը շակսաժ, նրա վերջի, նրա հետե-
ղանքի մասին էիր գողում, և այդպես անում էիր դու ամեն անգամ, բո-
լոր ասպարեզներում: Քո խելքի և զգացմունքների մեջ երբեք ներդաշնա-
կություն չի եղել, ահա՛ քո ցավը, քո խոշընդուռը, քո արգելքը: Դու զգի-
տեիր և ալժմ խեկ զիտես այն նշանափոր իմաստաերի խոսքերը, թե

«զյանքը կումեղիա է մտածողի համար, իսկ դրամա — զգացողի համար»: Քեզ համար նա դրամա է եղել, ուրեմն թող կատարվի այդ դրաման մինչև վերջը:

— Ծշմարիտ է:

— Խմի՛ր, ուրեմն, քո դառնությունը մինչև բաժակի հատակը:

— Խմենց, այսո՞ւ, կիսմեմ և մի կաթիլ անգամ չեմ թողնիլ նրա միջը եթ Քամալանք կրկին սկսեց շահել:

Փոքրիկ սենյակը լցվեց մի ծխախոտի ծխով։ Վառարանի մեջ այս պահում էին փայտի վերջին կտորանանքը։

— Հույս, — ա՞չ ի՞նչ է հարկավոր ինձ, ա՞չ ա ինչի բացակայությունն է թունավորում իմ կյանքը։ Բայց ո՞րտեղից գտնել հույս, և ո՞ւր է նա, ի՞նչպես կարող է նա նորից վերագառնալ իմ մէջ, քանի որ նա միանգամայն, այո՛, միանգամայն մհուած է...»

Այս խոսքերը Քամալյանն արտասանեց ավելի բարձր ձայնով: Հետո նա յուր մռայլ, ցրված հայացքը ուղղեց դեպի վառարան և սկսեց անթարթ աշքերով նայել կրակին: Մի տեսակ դառն ժամփակ էր խազում նրա շրթում քնների վրա այդ ժամանակ:

Աշակ վառարանի մեջ այլպում է անտառից բերված փայտը: Սրանք ևս, այդ անշունչ փայտի կտրտանեքն ևս անօգուտ չեն: Քանի որ լուս աստաղի մեջ էին, այնտեղ նրանք կազմում էին աշապին կանաչապարդ ծառեր բազմաթիվ ճյուղերով և անհամար տերևներով: Այդ մի բախտավլորություն է: Նրա ճյուղերի շվաքի տակ հանգստանում էր հոգնած հովին յուր փոքրիկ գառնուկների հժոտ, նրա գաղաթում ուրախ-ուրախ թռչուտում և զվարճանում էին անթիվ թռչնակներ: Որքա՞ն, երկի բախտավլոր էր զգում իրան ծառն այդ ժամանակ, որչա՞փ նաև զպարտանում էր զգալով յուր օգտակարությունը թե՛ մարդուն և թե կենդանիներին: Մակայն, ապերակիս է մարդը: Ի՞նչ վճարեց նա բարեկիրտ և օգտավեած ծառին նրա վեհանձնության փոխարեն: Նա, այդ երախտամոռ արարածը, կացնի սուր բերանն յուր կեղտոտ և զգլելի ձեռներով ուզդեց ծառի ամոր և հաստ բունին: Տնքաց այդ վեհանձն մարդասերը, յուր սրտի խորքից անիծեց ապերախտ մարդուն, ճոճուց և, մի դառն հառաջանք արձակելով, թավալվեց գետին: Շաոր մեռավ, բայց մահից հետո ևս նա շկորցեց յուր օգտակարությունը: Նրա մարմնի փշրանքներն աշա այսօր ձմեռվաս սառնությունից պաշտպանում են մի զգվելի մարմին: Գյուղական խըր-հիթում նրանք տաքացնում են աղքատ շինականի և նրա փոքրիկ գաղակների ձյունից ու բուքից բարացած մարմէնները: Հարուստի պալատում նրանք գուրեկան շերմություն են պարգևում փարթամներին: Իսկ

նա, անբախտը, նա է միայն ավելորդ մարմին աշխարհի երեսին: Արքա՛ն գժիախտություն, որպիսի՞ ցավ է զգալ ինքը քեզ մինչև անգամ ալդ անշունչ առարկալի, փայտի առջև ստորոտիթյունը, քո ոչնչությունը: Սյու մի անտանելի վիշտ է...»

Քամալյանը մոտեցավ սեղանին և կրկին սկսեց թերթել հիշատակարանը:

Այնտեղ նկարագրված է նրա կյանքը 187... թվականից մինչև այսօր. այսինքն՝ սկսած այն օրից, երբ ավարտեց գիմնազիայում յուր ուսման ընթացքը: Նա արհամարհեց բարձր կրթությունը և ինչո՞ւ նրա համար, որ պեկի շուրջ մտնի հասարակական գործունեության ասպարեզը: Այն ժամանակ շտապում էր և, կարծելով, թե բավական է յուր ստացած մըտավոր պաշարն այդ ասպարեզում յուր համար հարմար տեղ բռնելու նա մտածում էր, որ կարող է ընթերցանությամբ լրացնել այն պակասը, որ պիտի լրացներ համալսարանն, և սկսեց այդ օրվանից անդադար և անընդհատ կարդալ, կարդալ ու կարդալ: Ահա այստեղ գրված է նրա կարդացած գրքերի անունները: Տեր աստված, ո՞րշափ անկանոն և անկապ ընթերցանություն: Բայց նա մինչև այսօր էլ շարունակում է: Օ՞չ ցնորք, մի ժամանակ նա հավատացած էր, թե մեծ բանաստեղծական ձիրք ունի, և այդ ցնորքով ոգեշրջված՝ ուսումնասիրում էր Շեքսպիրին, Շիլերին, Բայրոնին, Գյոթեին, Լավ ուսումնասիրեց: Համբերություն չունեցավ սրանց գրվածքներից գեթ մեկը կանոնավոր կերպով կարդալու: Ինչ ծաղրեկի միտք էր այն, որ այդ ժամանակ նրան պաշարել էր: Նա հավատացած էր, թե յուր մեջ կա թարնված ընդարձակ տաղանդ և կարծում էր, որ ընթերցանությունը կսպանի այդ տաղանդի ինքնուրույնությունը: Բայց ահա՝ նրա բանաստեղծական տաղանդի պտուղը, ահա այն հիմար, անհամ ուսանավորները, որոնք նույնիսկ թառումյանի նման տխմարին էլ ծիծաղ էին պատճառում: Փորձեց մի դրամատիկական պիես գրել: Կարծում էր, որ պրովան ավելի հաջողվի, Բայց, դեռ առաջին երկու երեսը շավաբառած, թողեց: Այն արդեն շափից դուրս անհամ էր: Փորձեց վեպիկներ գրել... թյո՛ւ, ի՞նչ անտանելի էին այդ օրերը: Ուղիղ երկու շաբաթ մտածել միայն մի վեպիկի վերնագրի մասին և վերջ ի վերջ հորինել «Պանդաղություն» վերնագիր, այդ արդեն շափից դուրս է, խելագարություն է, եզր ո՞ր մեկը թիվ, նրա հիմարություններն անթիվ, անհամար են, նրա ամեն քայլը եղել է սխալ, Բայց ինչի՞ցն է ծագել այդ սխալը: Թուլությունից, հաստատ կամքի բացակայությունից, որոնք նրա անբնական կյանքի հետանքներն են: Նույն անբնական կյանքը շարունակվում է և այսօր: Նրա ուղեղը ծանրաբեռնվել է հաղար տեսակ տարբեր գաղափարներով,

իրարու հակառակ մտքերով, և այդ բոլորն անորոշ ու անկանոն կերպով այս բոպեին դասավորված նրա գլխումը, դժգում են այնտեղ, ինչպես անթիվ որդեր: Ի՞նչ է արել... ի՞նչ է անում և ի՞նչ պիտի անի... է՞լ ի ոչինչ Ոչի՞նչ...»

Նա հանեց ժիշետի գրպանից ժամացույցն և նայեց:

— Արդեն գիշերվա երկու ժամն է, քունս չի տանում, գլուխս ցավում է... ականչներում, կարծես, թմրուկներ են ածում, գլխիս գանգը ուզում է արագվել: Ինչպե՞ս տաք է ճակատս, աշքերս մթնում են... այդ ինչի՞ցն է... Անքնությունից կլինի, երեկ գիշեր էլ մինչև լույս չեմ քնել: Բայց ի՞նչ անհմ, որ քունս չի տանում: Զարմանալի բան... այսօր չեմ ճաշել, երեկոյան էլ թեյ չեմ խմել, բայց քաղց ամեննին չեմ զգում, ախորժակս մեռել է...

Նա կրկին բարձրացավ տեղից և կրկին սկսեց քայլել: Այս անգամ նրա երսին բոլորումին գույն չէր մնացել, աշքերը վառվել էին, ցամաքած շրթունքները ցնցողաբար գողզողում էին: Նա մտածում էր, բայց ինչ էր մտածում: այդ ինքն էլ չգիտեր: Նրա զլիում տիրում էր կատարյալ քառու Սակայն մտքերի այդ խառնաշփոթության մեջ որոշվում էին հետեւյալ գծերը:

— Հզու անդորրությունը մարդկային կյանքի երշանկությունն է: Երանելի է այն մարդը, որ վայելում է այդ երշանկությունը: Ես մինչև այսօր զորիկ եմ եղել նրանից, նամանավանդ այժմ: Իմ անցյալը լիքն է վշտերով, ապագան պատկերանում է իմ առջև սկ գույներով, իսկ ներկան անտանելի է: Անտանելի է, հեշտ է ասել, թե կյանքն անտանելի է, բայց զգա՞լ այդ անտանելիությունը, օօ՞՞... Մուրացկանի, անդամալույծի դառն, դժնդակ կյանքի հարվածների ներքո թշվառացած արարածների քրբալի գրությունը կարող է հասկանալի լինել ամենի համար: Բայց թե որքան ծանր է այս զրությունը, որքան վշտալի է միմիայն իրան, միմիայն թշվառին: Ամենազորեղ երեակայությունը, ամենազգայուն սիրտ ունեցող մարդն անգամ չի կարող զգալ ուրիշի թշվառությունների տասներորդ մասը: Ո՞վ կարող է զգալ իմ զրությունը, բացի ինձանից: Ո՞չ ոք: Ինչպես կարող եմ ես հասկացնել ուրիշներին, այն ինչ որ եմ զգում: Ոչ մի կերպ, զա անհնարին է:

Քամալյանը կրկին թաղվեց մտածողության մեջ, Անցան մի քանի րոպեներ և կրկին սկսեց խոսել բարձր ձայնով:

— Այո՛, անտանելի է կյանքը, այս աշխարհում ինձ համար տեղ չկա: Անօգուտ եմ եղել մինչև օրս... անօգուտ եմ այժմ... անօգուտ կլինի և իմ ապագան: Անօգուտ ինձ համար, վնասակար ուրիշների համար: Եկ

ով կարող է ասել, որ ես հասարակության ավելորդ անդամ չեմ: Ա՛խ, կյանքի բեմի վրա ես դեր շունիմ: Իսկ մի մարդ, որ դեր շունի, նա պիտի հեռանա բեմից, որպեսզի շխանգարի խաղացողներին: Այդ պարզ է, և ոչ ոք չի կարող հակառակել: Ի՞նչ միտք ունի, ուրեմն, իմ գոյությունը: Ոչինչ: Զեա մի բան, որի հետ կապված լինի իմ կյանքը: Ես ավելորդ մարմին եմ, որ սխալմամբ ընկել եմ այս աշխարհը: Ես իսկի մարմին էլ չեմ... թափանցելի օք.. Այդ էլ չեմ... օքը օգտավիտ է... Բայ ի՞նչ եմ... ոչինչ: Սխալվում են ֆիզիկոսները, ասելով թե աշխարհում «ոռչինչ» ասված բան չկա: Ի՞նչպես թե չկա, բայ ես ի՞նչ եմ: Սխալվում են. երկի, նրանք ինձ չեն ճանաշում, ապա թող ինձ իրանց վիտնական հետազոտության ենթարկեն, այն ժամանակ կտեսնեն, թե ինչպես կոշչանա իրանց թերորիան:

Քրում սաստիկ ձյուն էր դալիս: Քամայցանը բարձրացավ տեղից և, պատուհանի վարագույրը մի կողմ ծալելով, սկսեց նայել զեպի փողոց: Երկար ժամանակ նա անշարժ դրության մեջ նայում էր քրոնած ապակիների միջով ձյունալի մինորտաթին: Հանկարծ նա, կարծես մի բան մտաքերելով, աջ ձեռը խփեց հակատին և պատուհանի վարագույրը շտապով ծածկեց:

— Վճռված է, վճռված է,— արտասանեց նա բարձր ձայնով և կրկին գիտեց սեղանին:

Նա ջարդված սրտով, թուլացած մարմնով ընկավ աթոռի վրա և երկու ձեռներով պինդ սեղմելով զլուխը, սկսեց անթարթ աշքերով նայել հիշատակարանին: Նրա ջայացքն անմիտ էր, նրա շրթունքները ժպտում էին վայրենի կերպով, աշքերը փայլում էին մի տեսակ կատաղի փայլով: Մի քանի բողեք նա այս գրության մեջ մնաց, հետո կրկին սկսեց քայլել: Նրա ծնկները թուլացել էին, չարբածի նման չէր կարողանում ուղիղ ման զալ: Այլպես շարունակեց մոտ կես ժամ: Հետո նա, շուռումուռ գալով, դարձյալ մոտեցավ սեղանին և հանկարծակի, խիլագարի պես, հարձակվեց հիշատակարանի վրա, վերցրեց նրան և սկսեց ձեռներով կրծոտել...

Պառարանը հանգելու վրա էր, կրակի երեսն արդեն ժածկված էր մոխրով: Քամալլանը, հիշատակարանը կրծոտելով և վայրենաբար բղավելով, մոտեցավ վառարանին, վերցրեց ունելիքը և կրակը խառնեց: Անցան մի քանի վայրկյաններ, հանկարծ կրակը վառվեց, և վառարանի մեջ բարձրացավ պայծառ բոց:

— Հա՛, հա՛, հա՛, քսանուհինդ տարվա կյանք... ահա՛ ինչ է քո

վարձը, ահա ինչի ես արժանի դու,— գոռաց նա վայրենի զվարճությամբ, նայելով հիշատակարանի բոցավառված թերթերին:

Մի բոցեռում կրակը լափեց երեսուն թերթերից բազկացած ձեռատետրը: Բոցը զադարեց, և կրկին մոխիրը ծածկեց կրակի երեսը:

— Վերջացավ, վերջացավ ամենայն ինչ, բանուհինդ տարվա կյանքը մոխիր դարձավ, մոխիր կարձավ իմ բոլոր անցյալը.. Ազատվեցի, ուփ, ազատվեցի... զնա կորիր հին կյանք, էլ քեզ հետ ես գործ չունեմ:

— Ամեն ինչ կորավ, կորավ ամբողջ կյանքս, անհետացավ: Զեա այն իսկ ապագա՞ն: Հըմ, երեխս եմ, նորից պիտի մեծանամ, հա՛, հա՛, հա՛, քսանուհինդ տարեկան երեխս, ինչ ասել կուզի, շատ փոքր եմ դեռ: Սպասիր, կրակ, ես քեզ համար դեռ կարակուր շատ ունիմ պատրաստած, տեսնում եմ իստու ես քաղցած... սպասի՞ր: Դա ի՞նչ է, հա՛...

Նա սեղանի վրայից վերցրեց մի միծ հաստակապմ զիրք:

— Անոազ, առաջ այս ցնորամիտին, հետո,— ասաց նա ձգելով զիրքը վառարանը: Բարձրացավ մի թանձր ծուխ, որից հետո զիրքը բոցավառվեց, և նրա կազմի վրա փայլեց ոսկեզօծ տաներով տպված «Փիլոսօփիա բեսօնատելիոց» վերնագիրը: Բոցը լգացարած, վառարանի մեջ ընկավ մի ուրիշ զիրք, որին հետեւց երրորդը, շորորդը, թվով մինչև տասը:

— Հիմարներ, ամբողջ ձեր դատարկ կյանքը նվիրել էր այդ թերթերը սեացնելուն, տեսներ կրակը ինչ շուտ է լափում ձեր խելքը... Ի՞նչպես է, լա՞վ է, կովկեք իրարու հետ, բայց տեսներ, ես ձեզ ինչպես հաշտեցրի..

Բոցը կրկին զադարեց, և մոխիրը ծածկեց կրակի երեսը: Քամալլանը հեռացավ վառարանից, կանգնեց սեղանի առջև, մտիկ տվավ այրված զրբերի դատարկված տեղին, հետո ջայացը դարձրեց վառարանին և ձեռները բարձրացնելով, մի ուժգին հարված տվավ զլսին:

— Ի՞նչ արի ես, ի՞նչ արի, ի՞նչ արի այդ,— գոռաց նա այնպիսի զորք ձայնով, որ հարեւն սենյակում քնից զարթնեց նրա տանտիրուհին պառավ Քեթեանը:

— Այժմ ես նոր մարդ եմ; Հա, Հա, Հա,— կրկնեց Քամալլանը, կատաղաբար ծիծաղելով: Ծեմքի մեջ երեցավ Քեթեանի սարսափած զեմքը:

Քամալլանը, ինքն էլ զգիտեր թե ինչու, հարձակվեց պառավի վրա և, բռնելով նրա թևերից, ներս քաշեց:

— Ե՛կ այստեղ, ցանցառ պառավ:

Պառավը սարսափած, զողղողակով, մհջքից ծոված, ակամա հետեւց նրան:

— Քանի՞ տարեկան ես:

— Խելքդ դրուստ տիղը շէ, երակ ես տեհի:

— Ասիր տեսնեմ, յոթանասուն տարեկան կենդանի, ի՞նչպես ևս
ապրել այդքան ժամանակ, հըմ, չե՞ս զզվել կյանքից, հըմ, ասի՞ր, —
կրկնեց Քամալզանը, բոլոր ուժով թափահարելով պառավին:

— Իծանիրդ...

— Սուս, սուս, դուրս եկ, գնա, քունս տանում է, դո՞ւս:
Նա պառավին Հրեց սենյակից դուրս և դուռը փակելով, պառկեց
երեսի վրա անկողնում:

— Ի՞նչ եմ անում, ի՞նչ եմ անում, — կրկնում էր նա անդադար, եկ
մի ամբողջ ժամ նա մնաց այդպես պառկած: Վերջապես, քունը հաղթեց
նրան:

Առավոտյան պառավ Քեթեանը, վախսվիսելով դուռը բաց արավ և մի
ոտք սենյակի ներսումը, մյուսը դրսում, հարցրեց.

— Վո՞նց իս:

— Գլուխս ցավում է, տաքացրել եմ, գեղի, մի հաքիմ կանչիլ տուր, —
պատասխանեց Քամալզանը, վերմակով ծածկելով իր գոճաթափ դեմքը
և երեսը շուր տալով պատին...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱՂԵ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐ

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Ա. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Իավրյան
Վերսուլող սրբագրիչ՝ Ռ. Ս. Հովհաննես

ИБ 2141

Հանձնված է շարվածքի 03. 02. 1986 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 06. 1986 թ.: Թուղթ № 3, չափար՝ $60 \times 84^1/16$: Տպագրությունը՝ բարձր Տառատևական՝ «Գրքի սովորական»: Հրատ. 9,56 մամ., տպ. 11,0 մամ., պայմ. 10,23 մամ., տպ. 10,5 դոն. թ. օտա. Պատվեր 197: Տպագանակ՝ 50 000:

Գինը՝ 95 կուգ.

«Լույս» հրատարակություն, Երևան-9, Կիրովի 19 ա:

Издательство «Луис», Ереван-9, ул. Кирова, 19 а.

ՀԵՍ Հրատարակությունների, պոլիգրոֆիայի և գրքի առևտիք գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Աւալիրյան 55:

Гипография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.